Արձանագրություն N 4

Մարզային առողջապահական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/72» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «26» «Նոյեմբերի» 2025թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ա. Բաբայան
Հանձնաժողովի անդամներ Վ.Վահանյան, Ա.Գևորգյան, Հ.Խուրշուդյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Բաբայան)

Ընդունել ի գիտություն, որ 22.10.25թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի նոյեմբերի 4-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի նոյեմբերի 5-ին ժամը 11:00-ին: 2025 թվականի նոյեմբերի 6-ին ժամը 11:30-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ	armedtechnicallc@gmail.com	02604367
2	«ՏԵԽՆՈ-Մ» ՍՊԸ	Melsik.avagyan74@mail.ru	03584717
3	«Դիավանտ» ՍՊԸ	lawyer@diavant.am	00255375
4	ՖԱ Աստղիկ Հակոբյան		012123456
5	«Իվաֆարմ» ՍՊԸ	Ivapharm89@gmail.com	08625799
6	«Կվանտա» ՍՊԸ	quantasystemsarmenia@gmail.com	01045958
7	«Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ	tenders@margpharma.com	00842845
8	«Մեդպրո» ՍՊԸ	info@medpro.am	02626144
9	«Մեդթրեյդ» ՍՊԸ	info@medtrade.am	00220168
10	«Մ.Վ.» ՍՊԸ	info@mvmedtech.am	02698551
11	«Սուրեն Հակոբյան Գուրգենի» ԱՁ	Surohakobyan1992@gmail.com	40201069

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ա. Բաբայան)

Առաջին տեղը զբաղեցրած ՖԱ Աստղիկ Հակոբյանի կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, այդ թվում հայտի ապահովումը:

Մնացած առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ «Տեխնո-Մ» և «Իվաֆարմ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ա. Բաբայան)

«Տեխնո-Մ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ վերջինիս կողմից բանկային երաշխիքի տեսքով ներկայացված հայտի ապահովման մեջ հրավերով պահանջվող երաշխիքի գործողության ժամկետը՝ 120 աշխատանքային օրը հաշվարկված է մեկ օրվա անճշտությամբ 28.04.2026թ. փոխարեն նշված է 27.04.2026թ., իսկ մնացած փաստաթղթերը, այդ թվում ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան, և գնահատող հանձնաժողովը կայացրեց որոշում «Տեխնո-Մ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

ՖԱ Աստղիկ Հակոբյանի կողմից ներկայացված հայտում բացակայում են բոլոր հրավերով պահանջվող փաստաթղթերը, այս թվում հայտի ապահովումը՝ անճշտություն, որը ենթակա չէ մերժման, ուստի վերջինիս հայտը ենթակա է մերժման:

«Իվաֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան և ենթակա է շտկման: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և հնարավորություն տալ շտկել մասնակիցներին առձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով 07.11.2025թ. ծանուցել է մասնակիցներին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված շտկման ծանուցումները՝ ըստ մասնակիցների.

«Իվաֆարմ» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/72» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ 4-րդ չափաբաժնի համար նշել հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև նշված չափաբաժնի համար ներկայացնել տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժնի համար նշել հստակ երաշխիքային ժամկետը, ինչպես նաև որակի վկայականները՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը՝ բացառելով «պետք է» լինի արտահայտությունը, այլ հստակ նշվի: Շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

11.11.2025թ. էլեկտրոնային աճուրդ համակարգում հասանելի էին մասնակցի կողմից ներկայացված պահանջված շտկումները: Գնահատող հանձնաժողովը գնահատելով «Իվաֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը արձանագրել է, որ բոլոր շտկումները կատարված են և մասնակցի շտկված տարբերակը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը կայացրել է հետևյալ որոշումը՝

Որոշվեց. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի պահանջները շտկումներ ներկայացրած «Իվաֆարմ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Որոշվեց. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները մերժել ՖԱ Աստղիկ Հակոբյանի հայտը:

Որոշվեց. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները բավարար գնահատել «Տեխնո-Մ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Ա. Բաբայան)

05.11.2025թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Բաբայան)

Հրավերի վերաբերյալ ստացվել են հետևյալ հարցումները, որոնց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջներին համապատասխան տրամադրվել են հետևյալ պարզաբանումները.

Հարցում 1-ին՝ ներկայացվել է 27.10.2025թ.

«Հարգելի՝ հանձնաժողով, 1-ին և 2-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում սահմանված է հետևյալ պահանջը. «Անոթներում իրական ժամանակում արյան հոսքի ճշգրիտ պատկերման ոչ-դոպլերային թվային տեխնոլոգիային աջակցող ծրագրի առկայություն կամ արյան հոսքի բարձր տարածական և ժամանակային լուծաչափով պատկերման ծրագրի առկայություն՝ ներառյալ. * արյան արտացոլող տարրերի ուղիղ պատկերում B ռեժիմում, * միայն հոսքերի պատկերում B ռեժիմում՝ առանց ստատիկ կառուցվածքների, * հոսքերի պատկերում B ռեժիմում ուղղության գունային կոդավորմամբ՝ ստատիկ կառույցների հետ միասին, * սկանավորման անկյան ազդեցության բացակայություն և արագության սանդղակի «համընկնման» էֆեկտի բացակայություն, * արյան հոսքի պատկերավորում ամբողջ պատկերում՝ առանց «հետաքրքրության տարածքի» սահմանափակման, * անոթների ամբողջական տարածական քարտեզի կառուցում ժամանակավոր կուտակման հատուկ ռեժիմում, * աջակցություն գծային և կոնվեքսային տվիչների հետ:» Նշված ֆունկցիոնալության իրականացումը մեկ միասնական ռեժիմում հանդիսանում է կոնկրետ արտադրողի սեփական (proprietary) տեխնոլոգիական լուծում և չի հանդիսանում ոլորտում ստանդարտացված կամ բազմաբրենդային կիրառվող ռեժիմ: Այնուամենայնիվ, անոթային սոնոգրաֆիկ հետազոտությունների

համար անհրաժեշտ հոսքային հեմոդինամիկ տվյալները լիարժեքորեն ապահովվում են հրավերով արդեն առանձին նշված ռեժիմներով՝ Color Doppler, Power Doppler, Pulsed Doppler, Triplex, որոնք հանդիսանում են ընդունված և լայնորեն կիրառվող մեթոդներ: Հետևաբար, վերոնշյալ հատուկ ռեժիմի պարտադիր պահանջումը ստեղծում է փաստացի ապրանքանիշային սահմանափակում, քանի որ մրցույթին չեն կարող մասնակցել տեխնիկապես համարժեք սարքավորումներ, որոնք չեն ներառում հենց այդ սեփական անվանումով և կառուցվածքով ռեժիմը, անկախ նրանից՝ նրանք բավարարում են կլինիկական նույն խնդիրները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք տվյալ կետը հեռացնել տեխնիկական բնութագրերից՝ պահպանելով հրավերով արդեն ներկայացված անոթային գնահատման ռեժիմները:»

Պարզաբանում 1՝ տրամադրվել է 29.10.2025թ.

«Հարգելի գործընկեր 1-ին և 2-րդ չափաբաժինների համար հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի «Անոթներում իրական ժամանակում արյան հոսքի ճշգրիտ պատկերման ոչ-դոպլերային թվային տեխնոլոգիային աջակցող ծրագրի առկայություն կամ արյան հոսքի բարձր տարածական և ժամանակային լուծաչափով պատկերման ծրագրի առկայություն. արյան արտացոլող տարրերի ուղիղ պատկերում B ռեժիմում; միայն հոսքերի պատկերում B ռեժիմում առանց ստատիկ կառուցվածքների; հոսքերի պատկերում B ռեժիմում ուղղության գունային կոդավորմամբ ստատիկ կառույցների հետ միասին; սկանավորման անկյան ազդեցության բացակայություն արյան հոսքի պատկերավորման վրա, արագության սանդղակի "համընկնման" էֆեկտի բացակայություն; արյան հոսքի պատկերավորում ամբողջ պատկերի վրա, "հետաքրքրության տարածքի" տարածական սահմանափակման բացակայություն; անոթների ամբողջական տարածական քարտեզի կառուցում արյան ժամանակավոր կուտակման հատուկ ռեժիմում; աջակցություն գծային և կոնվեքսային տվիչների հետ» պահանջում տեղի է ունեցել շարադրական վրիպակ: Պահանջված հնարավոր երկու ծրագրերից հետո եկող նկարագրությունը (արյան արտացոլող տարրերի ուղիղ պատկերում B ռեժիմում; միայն հոսքերի պատկերում B ռեժիմում առանց ստատիկ կառուցվածքների; հոսքերի պատկերում B ռեժիմում ուղղության գունային կոդավորմամբ ստատիկ կառույցների հետ միասին; սկանավորման անկյան ազդեցության բացակայություն արյան հոսքի պատկերավորման վրա, արագության սանդղակի "համընկնման" էֆեկտի բացակայություն; արյան հոսքի պատկերավորում ամբողջ պատկերի վրա, "հետաքրքրության տարածքի" տարածական սահմանափակման բացակայություն; անոթների ամբողջական տարածական քարտեզի կառուցում արյան ժամանակավոր կուտակման հատուկ ռեժիմում; աջակցություն գծային և կոնվեքսային տվիչների հետ) վերաբերվում է միայն «Անոթներում իրական ժամանակում արյան հոսքի ճշգրիտ պատկերման ոչ-դոպլերային թվային տեխնոլոգիային աջակցող ծրագիր»-ին: Նշված ֆունկցիոնալը հարկավոր է, որպեսզի հնարավոր լինի իրականացնել առավել ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված հետազոտություններ: Վերը նշված պահանջին բավարարում են թե անոթներում իրական ժամանակում արյան հոսքի ճշգրիտ պատկերման ոչ-դոպլերային թվային տեխնոլոգիային աջակցող ծրագրի առկայությամբ և թե բարելավված դոպլերային հնարավորություններով (այդ թվում և Մազանոթային քարտեզագրման ռեժիմ՝ բարձր տարածական, ժամանակային թողունակությամբ և կադրերի բարձր հաճախականությամբ) սարքերը:»

Հարցում 2-րդ՝ ներկայացվել է 29.10.2025թ.

«Հարգելի գործընկեր, Խնդրում ենք տրամադրել պարզաբանում հետևյալ հարցադրումներին: 1. 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրերում պահանջել եք հետևյալ պարամետրը՝ Շնչառական ծավալը՝ 5-ից 1500 մլ տիրույթում: Ցանկանում ենք տեղեկացնել, որ որոշ արտադրող ընկերություններ սիրում են օգտագործել «0-1500 մլ» շնչառական ծավալ հասկացությունը՝ հաճախորդներին մոլորեցնելու համար: Նրանց հայտարարագրած շնչառական ծավալ 0-1500 մլ է, բայց իրականում 0-10 մլ ծավալը ոչ ակտուալ ծավալ է, որը ոչ մի նպատակի չի ծառայում: Իրական շնչառական ծավալը սկսվում է 10մլ-ից: Ուստի առաջարկում ենք կատարել համապատասխան փոփոխություն տեխնիկական բնութագրերում՝ սահմանելով 10-1500մլ իրական շնչառական ծավալի պահանջ կամ պարզաբանել, որ սահմանված պարամետրից 5մլ շեղումը թույլատրելի շեղում կհամարվի ձեր կողմից: Հակառակ պարագայում խնդրում ենք հիմնավորել, թե ինչ նպատակի է ծառայելու ներկայացված 5մլ շնչառական ծավալի պարամետրը, որը իրականում ձեր համոզմամբ ապահովում է պահանջված սարքը: 2. 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրերում պահանջել եք հետևյալ պարամետրը՝ Երկու ներկառուցված սենսորային էկրաներ սարքավորման կարգաբերումների և հիվանդի վիտալ տվյալների ցուցադրման համար, անկյունագծերով՝ ոչ պակաս քան 12": Համոզված ենք, որ չեք կարող ներկայացնել գեթ մեկ նման սարքի օրինակ, որտեղ 2 էկրանները միաժամանակ ներկառուցված կարող են լինել սարքին: Տարբեր արտադրողների մոտ հանդիպում են 2 կամ ավել էկրաններով մոդելներ, որտեղ էկրանները ամրացված են սարքին արմունկների վրա, կամ մեկ էկրանը ներկառուցված է սարքին, իսկ երկրորդ կամ ավել էկրանները նույնպես արմունկների վրա են ամրացված, բայց ոչ միաժամանակ երկուսն էլ ներկառուցված են: Առավել ևս նման պահանջը բացարձակ որևէ ֆունկցիոնալ առավելություն չի տալիս սարքին: Գուցե ձեր նկարագրությունն է ոչ լիարժեք կամ գուցե մենք ենք սխալ մեկնաբանում ձեր կողմից գրված այդ պահանջը, սակայն խուսափելու համար տարակարծիք մեկնաբանություններից՝ խնդրում ենք տալ պարզաբանում, որ, պահանջելով երկու ներկառուցված սենսորային էկրաներ սարքավորման կարգաբերումների և հիվանդի վիտալ տվյալների ցուցադրման համար, անկյունագծերով՝ ոչ պակաս քան 12", նկատի եք ունեցել նաև, որ էկրանները կարող են ամրացված լինել սարքին նաև արմունկների վրա: Հակառակ պարագայում խնդրում ենք հիմնավորել, որ գոյություն ունեն մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված համապատասխան մոդելի սարքեր ձեր պահանջած պարամետրով: Հարգանքներով:»

Պարզաբանում 2՝ տրամադրվել է 31.10.2025թ.

«Հարգելի գործընկեր 1. Տեխնիկական բնութագրում հստակ նկարագրված է շնչառական ծավալի համար պահանջված ցուցանիշը, այն է՝ 5-1500մլ: Փոքր ծավալների կիրառման անհրաժեշտությունը լինում է նորածինների անզգայացման ժամանակ: Տեղեկացնում ենք որ ինհալյացիոն անզգայացման սարքեր արտադրող տարբեր ընկերությունների կողմից արտադրված սարքերի շարքում առկա են սարքավորումներ, որոնք իրականում ապահովում են 5մլ շնչառական ծավալի կիրառման հնարավորությունը: 2. Տեղեկացնում ենք, որ գործարանային կառուցվածքով նախատեսված բոլոր էկրանները որոնք ամրացված են սարքավորման վրա (նաև շարժական արմունկով) հանդիսանում են ներկառուցված (built in): Ներկառուցված չեն հանդիսանում այն էկրանները, որոնք նախատեսված չեն գործարանային կառուցվածքով և միանում են սարքավորմանը առանձին, որպես լրացուցիչ կոմպոնենտ:»

Հարցում 3-րդ՝ ներկայացվել է 29.10.2025թ.

«Հարգելի գործընկեր Խնդրում եմ պարզաբանել հետևյալ հարցերը. 1. Թիվ 3 չափաբաժնով պահանջվող լապարոսկոպի լրակազմի մեջ ներառված մի քանի ապրանքի համար պահանջել եք <<Որակի վկայականներ (առկայություն) 1. MDSAP 2. ISO13485 կամ համարժեք 3. 93/42/EEC դիրեկտիվայով պահանջվող բոլոր անհրաժեշտ փորձարկումներն անցած CE սերտիֆիկատ կամ համարժեք MDR Regulation (EU) 2017/745 սերտիֆիկատ կամ բոլոր անհրաժեշտ փորձարկումներն անցած FDA սերտիֆիկատ>>, մասնավորապես պահանջել եք Էնդոսկոպիկ տեսախցիկի թվային վիդեոբլոկի համար, Բարձր ինտենսիվության LED լույսի աղբյուրի համար, Ինսուֆլյատորի համար, Լապարոսկոպիայի համար ներծծող և իրիգացիոն պոմպի համար: Ձեր պահանջած MDSAP վկայականը Ավստրալիայի, Բրազիլիայի, Կանադայի, Ճապոնիայի և ԱՄՆ-ի բժշկական նշանակության արտադրատեսակների շրջանառությունը կարգավորող թվով հինգ մարմինների կողմից սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում է տրվում: Այն մեծապես կրկնում է ISO13485 որակի կառավարման համակարգի կողմից ներկայացված պահանջները: Ինչ նպատակով եք մասնակիցներից պահանջում բացի ISO13485 և MDR Regulation (EU) 2017/745-ից, նաև MDSAP? 2. Ինչ կապ ունեն թվարկված հինգ երկրների կարգավորող մարմինների կողմից սահմանված պահանջները ՀՀ ներմուծվող և ՀՀ տարածքում կիրառվող բժշկական նշանակության արտադրատեսակների հետ? Ներմուծվող սարքի որակական կամ անվտանգային կոնկրետ ինչ առանձնահատկություն կա, որը ISO13485 և MDR Regulation (EU) 2017/745 վկայականներով չի լուծվում, սակայն MDSAP-ը <<փակում է>> այդ բացը? 3. Երբ նախորդ երկու հարցերին պատասխանելիս ենթադրաբար մեծածավալ հիմնավորումներ ներկայացնեք MDSAP վկայականի ծայրահեղ անհրաժեշտության, դրա բացառիկ նշանակության ու կարևորության մասին, ապա խնդրում եմ պարզաբանել, թե ինչպես է ստացվում, որ այդ նույն չափաբաժնի նույն լապարոսկոպի լրակազմի մեջ մտնող որոշ սարքերի համար պարտադիր պահանջում եք MDSAP վկայական, իսկ մյուսների համար չեք պահանջում: Եթե այդքան կարևոր է MDSAP վկայականի առկայությունը և այն պարտադիր պետք է ներկայացվի, ապա ինչու MDSAP վկայական չեք պահանջել նույն չափաբաժնի նույն լապարոսկոպի լրակազմի մեջ գտնվող 4K տեսախցիկի գլխիկի համար, Օպտիկամանրաթելային լուսատարի համար, 4K բժշկական մոնիտորի համար, Լապարոսկոպի գործիքների հավաքածուի համար: Այսինքն Դուք ընտրողաբար նույն լրակազմի մեջ գտնվող մի քանի սարքերի համար պահանջել եք MDSAP վկայական, իսկ այդ նույն լրակազմի մեջ գտնվող մյուս սարքերի համար չեք պահանջել: Հարց է ծագում, թե ինչն էր խանգարում Ձեզ, որպեսզի Ձեր կարծիքով այդքան կարևոր MDSAP վկայականի պահանջ սահմանեիք նաև լրակազմի մեջ մտնող մյուս սարքերի համար: Պատասխանն ակնհայտ է, Դուք ուղղակի արտագրել եք Ձեր նախընտրելի արտադրողի ձեռնարկում նշված ցուցանիշները, ուղղակի Ձեր նախընտրելի արտադրողը լրակազմի մեջ գտնվող որոշ սարքերի համար ունեցել է MDSAP վկայական, իսկ մյուսների համար չի ունեցել MDSAP վկայական, այլապես Դուք բոլոր սարքերի համար կպահանջեիք MDSAP վկայական: Ձեր նախընտրելի արտադրողի ձեռնարկից հրավերի տեխնիկական բնութագրում արտագրել եք գրեթե բոլոր ցուցանիշները, միայն մոռացել եք վերջում գրել RZ Medizintechnik GmbH: 4. Ինչ նպատակով եք պահանջում, որ Թվային տեսախցիկի համակարգը, տեսախցիկի գլխիկը, բարձր ինտենսիվության LED լույսի աղբյուրը, ինսուֆլյատորը և Լապարոսկոպիայի համար ներծծող և իրիգացիոն պոմպը լինեն նույն

արտադրողից? Եթե հաջորդ տողով արդեն խելամիտ պահանջ եք սահմանել, որ <<Բոլոր սարքավորումներն ու գործիքակազմը պետք է համատեղելի լինեն միմյանց հետ>>, ապա որն է նշված սարքերը նույն արտադրողից լինելու պահանջի նպատակը? Հավանաբար Ձեր նախընտրելի վերոնշյալ արտադրողը դրանք է արտադրում, իսկ եթե հանկարծ այդ արտադրողը արտադրեր լրակազմում ներառված բոլոր սարքերը, կասկած չունենք, որ պահանջելու էիք, որ բոլոր սարքերն արտադրված լինեն մեկ արտադրողից:»

Պարզաբանում 3՝ տրամադրվել է 31.10.2025թ.

«Հարգելի գործընկեր Ձեր կողմից բարձրացված հարցերը վերաբերվում են ոչ թե հրավերի բովանդակությանը այլ կարիքի ձևավորման սկզբունքներին և մեխանիզմներին և նպատակ չունեն պարզելու և հստակեցնելու հրավերով հաստատված տեխնիկական բնութագրում ներառված չափորոշիչներից որևէ մեկի համար սահմանված պահանջը: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:» Ձեր այն պնդումը որ տեխնիկական բնութագրում ներառված պահանջները արտագրված են RZ Medizintechnik GmbH ընկերության ձեռնարկից անհիմն են և չեն համապատասխանում իրականությանը: Տեղեկացնում ենք Ձեզ, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանում են առնվազն հինգ տարբեր ընկերությունների կողմից արտադրվող տարբեր մոդելների սարքավորումներ:»

Հարցում 4-րդ՝ ներկայացվել է 30.10.2025թ.

«Հարգելի գործընկեր Խնդրում եմ պարզաբանել, ապրանքների մատակարարման վերջնաժամկետը 2025 թվականն է, թե կարելի է նաև 2026-ին մատակարարել?:»

Պարզաբանում 4՝ տրամադրվել է 31.10.2025թ.

«Հարգելի գործընկեր: Ապրանքների համար մատակարարման ժամկետ նշված է ոչ թե «Պայմանագիրը կնքելուց 60 օրվա ընթացքում» այլ «Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 60 օրացուցային օրերի ընթացքում:»: ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/73 ծածկագրով գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով այն է, մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել, մատակարարման ժամկետի 60 օրացուցային օրվա հաշվարկը սկսելու է ֆինանսական միջոցներ նախատեսելու համար համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից: 1. Եթե պայմանագիրը ուժի մեջ մտնի 2025թ-ին, սակայն մատակարարումը՝ 2026թ-ին, հետևաբար ապրանքները կմատակարարվեն 2026թ.-ին, կամ եթե պայմանագիրը ուժի մեջ մտնի 2026 թ-ին մատակարարումները կարվի 2026թ.-ին: 2. Եթե պայմանագրի կնքման օրվանից հաշված 6 ամսվա ընթացքում կնքվի համաձայնագիր, նշանակում է

դրա հիմքն է ֆինանսական միջոցների հատկացումը: Պետք է հաշվի առնել, որ հրավերով սահմանված է կանխավճար 2025թ.-ին:»

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Բաբայան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/72» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթողներ ճանաչել և կնքել պայմանագրեր՝

- «Իվաֆարմ» ՍՊԸ-ն՝ 4-րդ չափաբաժնի մասով՝ 29,700,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Տեխնո-Մ» ՍՊԸ-ն՝ 5-րդ չափաբաժնի մասով՝ 18,750,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Մերժել ՖԱ Աստղիկ Հակոբյանի հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊԱՁԲ-2025/72» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/71» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 27.11.2025թ.-ից մինչև 06.12.2025թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Բաբայան

Անդամներ՝ _____ Վ. Վահանյան

_____ Ա. Գևորգյան

_____ Հ. Խուրշուդյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

Մարզային առողջապահական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/72 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 05.11.2025թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

Հ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Նախահաշվային		**ՖԱ Աստղիկ Հակոբյան, հայտը ենթակա է մերժման, հայտի ապահովում չի ներկայացրել**					**«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ**				
						Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/505	4	12,000,000.00	48,000,000.00	30,000,000.00	0.00	30,000,000.00	7,500,000.00	7,500,000.00	49,000,000.00	0.00	49,000,000.00	12,250,000.00	12,250,000.00
2	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/506	4	14,000,000.00	56,000,000.00	35,000,000.00	0.00	35,000,000.00	8,750,000.00	8,750,000.00	57,000,000.00	0.00	57,000,000.00	14,250,000.00	14,250,000.00
3	էնդոսկոպիայի, էնդովիրահատական սարքեր	33161190/502	1	59,000,000.00	59,000,000.00	35,000,000.00	0.00	35,000,000.00	35,000,000.00	35,000,000.00	60,000,000.00	0.00	60,000,000.00	60,000,000.00	60,000,000.00
4	ռենտգեն ախտորոշման համակարգ	33111330/504	2	20,000,000.00	40,000,000.00	30,000,000.00	0.00	30,000,000.00	15,000,000.00	15,000,000.00			0.00	0.00	0.00
5	անզգայացման սարքեր	33171700/501	4	9,300,000.00	37,200,000.00	25,000,000.00	0.00	25,000,000.00	6,250,000.00	6,250,000.00			0.00	0.00	0.00

Մարզային առողջապահական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/72 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 05.11.2025թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

Հ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Նախահաշվային		«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ					Սուրեն Հակոբյան Գուրգենի ԱՁ				
						Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/505	4	12,000,000.00	48,000,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00
2	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/506	4	14,000,000.00	56,000,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00
3	էնդոսկոպիայի, էնդովիրահատական սարքեր	33161190/502	1	59,000,000.00	59,000,000.00	58,999,875.00	0.00	58,999,875.00	58,999,875.00	58,999,875.00	180,000,000.00	0.00	180,000,000.00	180,000,000.00	180,000,000.00
4	ռենտգեն ախտորոշման համակարգ	33111330/504	2	20,000,000.00	40,000,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00
5	անզգայացման սարքեր	33171700/501	4	9,300,000.00	37,200,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00

Մարզային առողջապահական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/72 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 05.11.2025թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

Հ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Նախահաշվային		Իվաֆարմ ՍՊԸ					Դիավանտ ՍՊԸ				
						Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/505	4	12,000,000.00	48,000,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00
2	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/506	4	14,000,000.00	56,000,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00
3	Էնդոսկոպիայի, էնդովիրահատական սարքեր	33161190/502	1	59,000,000.00	59,000,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00
4	ռենտգեն ախտորոշման համակարգ	33111330/504	2	20,000,000.00	40,000,000.00	29,700,000.00	0.00	29,700,000.00	14,850,000.00	14,850,000.00	39,999,425.00	0.00	39,999,425.00	19,999,712.50	19,999,712.50
5	անզգայացման սարքեր	33171700/501	4	9,300,000.00	37,200,000.00	22,750,000.00	0.00	22,750,000.00	5,687,500.00	5,687,500.00			0.00	0.00	0.00

Մարզային առողջապահական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/72 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 05.11.2025թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

Հ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Նախահաշվային		Տեխնո-Մ ՍՊԸ					Կվանտա ՍՊԸ				
						Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/505	4	12,000,000.00	48,000,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00
2	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/506	4	14,000,000.00	56,000,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00
3	էնդոսկոպիայի, էնդովիրահատական սարքեր	33161190/502	1	59,000,000.00	59,000,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00
4	ռենտգեն ախտորոշման համակարգ	33111330/504	2	20,000,000.00	40,000,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00
5	անզգայացման սարքեր	33171700/501	4	9,300,000.00	37,200,000.00	18,750,000.00	0.00	18,750,000.00	4,687,500.00	4,687,500.00	22,500,000.00	0.00	22,500,000.00	5,625,000.00	5,625,000.00

Մարզային առողջապահական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/72 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 05.11.2025թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

Հ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Նախահաշվային		Մեդթրեյդ ՍՊԸ					Մեդպրո ՍՊԸ				
						Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/505	4	12,000,000.00	48,000,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00
2	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/506	4	14,000,000.00	56,000,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00
3	էնդոսկոպիայի, էնդովիրահատական սարքեր	33161190/502	1	59,000,000.00	59,000,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00
4	ռենտգեն ախտորոշման համակարգ	33111330/504	2	20,000,000.00	40,000,000.00			0.00	0.00	0.00			0.00	0.00	0.00
5	անզգայացման սարքեր	33171700/501	4	9,300,000.00	37,200,000.00	37,200,000.00	0.00	37,200,000.00	9,300,000.00	9,300,000.00	37,200,000.00	0.00	37,200,000.00	9,300,000.00	9,300,000.00

Մարզային առողջապահական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/72 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 05.11.2025թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

Հ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Նախահաշվային		M.V. Company				
						Վերջնական առաջարկ				
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/505	4	12,000,000.00	48,000,000.00			0.00	0.00	0.00
2	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/506	4	14,000,000.00	56,000,000.00			0.00	0.00	0.00
3	էնդոսկոպիայի, էնդովիրահատական սարքեր	33161190/502	1	59,000,000.00	59,000,000.00			0.00	0.00	0.00
4	ռենտգեն ախտորոշման համակարգ	33111330/504	2	20,000,000.00	40,000,000.00			0.00	0.00	0.00
5	անզգայացման սարքեր	33171700/501	4	9,300,000.00	37,200,000.00	37,200,000.00	0.00	37,200,000.00	9,300,000.00	9,300,000.00